


16

NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Զ. Մ. Ը. Մ.-ի

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1957

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր տարեշրջան	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1
Պոլիվիա	Մ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ	4
Տեղեկագիր և կոչ Հ.Մ.Ը.Մ.ի Սկառու. Մնոզ. հորհուրդի	Շ. ԳՐԻՍԵԱՆ	9
Մարմնակրթութեան Պատմականը	ՇԱԽԱՐՀԱՆ	15
Գիր և Գրականութիւն	Մ. ԵԱՆՇԳԵԱՆ	17
Սկառուութիւնը	ՀԱՅ ԱՐԻ	23
Հայ Արիներու սիմազգ. ճէպօրը		
 	EDITORIAL	25
La urbanidad	RAFFI MIRAKIAN	26
El carácter del pueblo armenio		30
Se festejó el 5º aniversario de la revista "Navasart"	C. A. E. de F. NOVOA	32
Medicina del deporte		35
El niño Mario Mardirossian 1er. premio de pintura	I. Z.	36
Las religiones, el deísmo y el teísmo		38
La U.G.A. se adjudicó la copa "9 de Julio"		

Օր. ՇՈՒՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ
և

Պր. ԱՆԳՐԱՆԻԿ ԷՔՇԻՆԵԱՆ
Ամուսնացեալք

Օր. ԻԼՏԱ ՄԸՍԸՐԻԵԱՆ
և

Պրն. ԳԱՐԼՕ ՓՈԹԻԿԵԱՆ
Ամուսնացեալք

Մեր շնորհաւորութիւնները:

*Ճաւառարդջի ֆոնտին Կարօ Շաւինեան
100 փետօ կը նուիրէ իր աղջկան՝ Օր. Շուշանի
և Պր Անդրանիկ Էքշիեանի ամուսնութեան
առթիւ:*

ՍՏԱՑԱՆՔ

Շնորհակալութեամբ տաքցամք Սակրատ Յ. Թերզեանի "ՀԱՃԸՆԻ ՈՒԹԱՄՍԵԱՑ ԳԻՒՑԱԶՆԱՄԱՐՏԸ" 700 մեծագիր էջ, պատկերազարդ, Բ. տպագրութիւն, Տպ. "Արարատ": Գին՝ Արժամքին 200 փետօ, Արտասահման 6 տոլար:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏՈՐԵՇՐԶԱՆ

Ամսոյս վերջը կը փախուի տարեշրջան մը եւս: Միութեանս ներկայ վարչութիւնը, ընդհանուր անդամական ժողովին ներկայացնելով իր բարոյական եւ նիւթական հաշուետուութիւնը, իր պաշտօնը օրինաւորապէս պիտի փոխանցէ նորընտիր վարչութեան:

Ուրախութեամբ կ'արձանագրենք, որ իրենց տարեշրջանի վերջացնող վարչականները աշխատեցան եղբայրական համերաշխութեամբ եւ ջանացին հաւատարիմ մնալ մեր գաղափարին, դաւանանքին եւ կանոնադրական տրամադրութեանց: Խրախուսեցին մեր նորակազմ սկսուածից, եւ կազմակերպեցին գալլիկներու բանակումը, որ իր տեսողութեամբ, յարմարութիւններով եւ թուական առաւելութեամբ գերազանց եղաւ նախորդներէն: Փոխադարձ այցելութիւններ եւ մրցումներ կազմակերպեցին ընդմէջ Գորտոսպայի եւ Մոնթէվիտէոյի, որոնք մարզական կարեւոր արդիւնքներ տուին, ստեղծելով նոր ոգեւորութիւն եւ խանդավառութիւն:

Այս տարի բախտն ունեցանք մեր արդիական մարզադաշտին եւ անոր ընդարձակ եւ շքեղ սրահին մէջ ընդունելու եւ հիւրասիրելու քանի մը ականաւոր հիւրերը յանձինս սկսուեալս ճորճ Մարտիկեանի, Փայանճեան ճեմարանի տեսուչ Սիմոն Վրացեանի, աշխարհահռչակ երգահան Արամ Խաչատուրեանի եւ Ընդհ. Արբայ Միութեան Միարանութեան Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեանի:

Մեր պատուական հիւրերը ոչ թէ ձեւականութեան համար,

այլ անկեղծ հիացումով եւ զարմանքով պնահատեցին մեր գործունէութիւնը, շնչտելով, որ մեր Միութիւնը, ի խնդիր աղագայահպանման, դրական գործ մըն է՝ որ կը կատարէ: Այս գնահատանքը, բնական է, ամենէն առաջ կը տրուի մեր հայրենասէր եւ առատաձեռն գաղութին, որոնք նիւթական եւ բարոյակալն քաջալերանքով ունինք անհատիկ արդիական ժամադրավայր մը եւ երիտասարդական կուռ իրազմակերպութիւն մը, որ անկարելի պայքարի մէջ է իր գոյատեւման համար:

Այս տարի կը լրանայ տեղւոյս մեր Միութեան հիմնադրութեան 30-ամեակը, որ բարեղէյ առիթ մըն է անդամագրութեան նոր արշաւ մը սկսելու, ինչպէս նաեւ լրացնելու շարք մը պակասներ, որոնք զգալի են տարիներէ ի վեր:

Նոր տարեշրջանի սեմին կ'ուզէինք կենցաղավարական շարք մը դիտողութիւններ յանձնել մեր մարզիկներու եւ սկառւտներու յատուկ ուշադրութեան:

Շուտով ամառը պիտի գայ եւ մեր երիտասարդութիւնը հնարաւորութիւն պիտի ունենայ կրկին մտերմիկ շփում ունենալու հասարակութեան հետ:

Արդ, ի՞նչ պէտք է ընել, որ մեր մարզադաշտը դառնայ ժողովրդական իրական ժամադրավայր մը, ուր կուգայ մեր հասարակութիւնը հանգիստ առնելու կամ հաճելի ժամանց ունենալու համար:

Հայկական օճախի ջերմութիւնը, մտերմութիւնը եւ հարազատութիւնը առաւել չափով չենք նկատեր մեր սեփական տան մէջ: Եւ ասիկա այն պատճառով, որ մեր մարզիկները անհոգութեամբ կ'անտեսեն բարեկրթութեան կամ կենցաղավարութեան պարզ եւ ընդունուած կանոնները:

Չգիտես ի՞նչ յուսի մտայնութեամբ մեր երիտասարդները ինքզինքնին իշխան եւ տէրը կը կարծեն մարզադաշտին, իսկ հասարակութիւնը գորշ զանգուած մը, որ պարտաւոր է միայն իրենցմով զբաղելու, իրենց խաղերն ու մրցումները դիտելու եւ ծափահարելու: Մինչդեռ ճիշդ հակառակը տեղի պէտք է ունենայ: Հասարակութիւնը մարզիկներէն կը սպասէ կարգապահութիւն, հիւրամեծարութիւն, յարգանք եւ գուրգուրանք: Եթէ ճիշդ է, որ մարզադաշտին իրական տէրերը մարզիկներն են, ապա անոնք պարտաւոր են յարգել հիւրը ընդունելու տարրական կանոնները:

Յաճախ ակննատես եղած ենք խիստ անհաճոյ երեւոյթներու, որոնք մեզ զարմանք պատճառած են:

Օրինակ, մարզադաշտէն ներս կը մտնեն անհատ կամ խումբերով հայրենակիցները, սովորաբար ընտանիքներով, ծեր, երի-

տասարդ, անչափահաս մանուկներ, որոնք դիմաւորութեան կամ առաջնորդութեան պէտք ունին եւ սակայն ոչ ոք կը հետաքրքրուի անոնցմով: Մարզիկները նոյնպէս կը մնան անտարբեր, դիտողի պարզ դերով: Կամ թէ՛ մարզիկները սեղան կամ աթոռներ պրակած են եւ կը հանգստանան իբր թէ, մինչ իրենց առջեւ ոտքի կեցած կիներ, ծերեր եւ փոքրիկներ, որոնք որեւէ կերպով տեղաւորուիլ կ'ուզեն: Տեսնելով այս ամէնը, կը կարծէ՞ք որ մեր երիտասարդները ընդունակ են իրենց պրակած տեղերը զիջելու եկողներուն: Բնա՛ւ:

Այսպէ՛ս եղած է ցարդ եւ շենք ուզեր, որ այսպէս շարունակուի ապագային:

Մենք կ'ուզէինք, որ մեր երիտասարդները ամէն տեղ, այլ մանաւանդ իրենց սեփական տան մէջ ըլլային բարեկիրթ, բարեհամրոյր, հաճոյակատար եւ ծառայական ղերին մէջ: Յարգելով քաղաքավարական կամ կենցաղավարական տարրական կանոնները, մեր մարզիկները կրնան իրենց տունը վերածել աւելի ջերմ քծախի մր, ուր, մեր տոհմիկ եւ հնաւանդ սովորութեանց համաձայն, իշխած է սէր, յարգանք եւ հարգատուութիւն:

Բաւական չէ միայն խօսիլ մարզիկի բարեկիրթութեան, այլ լասիրութեան եւ հաճոյակատարութեան մասին, այլ պէտք է գանոնք գործադրել ամէն առիթով եւ ամէն պարագայի տակ:

Ուրախ պիտի ըլլայինք եթէ այս փոքրիկ թերութիւնները սրբադրուէին այսուհետեւ:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Քրիստոնեան տրայած մըն է՝ բարձրացած կատարեալ բանակութեան: **ԱՌԳՈՐՏԷՐ**

Քրիստոսի իրակամութիւնը եւ լրութիւնը կը գտնուին միայն եկեղեցւոյ մէջ: **ՍՈՒՈՎԵՒ**

Քրիստոնէութիւնը ազատագրեց խիզըն պետութեան բռնակալութիւնն: **Է. Լ. ԺԻԻԼԷՆ**

Օրէմֆը առանց գործադրութեան ոչինչ է, իսկ գործադրութիւնը առանց օրէմֆի բռնապետութիւն է: **Ժ. Փ. ՌՈՒՍՕ**

Օրէմֆը այն օղակն է որ իրարու կը գողէ բնութիւնն ու մարդկային պայմանագրութիւնները: Այն սննհատը որ կը խզէ այդ օղակը՝ կը կռուի յարագործ: իսկ այն ազգը որ կը խորտակէ՝ կը կռուի ամհնագործ: **ԳՐԻՄԻԹԷԼ**

Ֆրանսական յեղափոխութիւնը գրականութեան մէջ կը նշանակէ բարեկիրթ ընկերութեան ջնջումը եւ լրագրութեան քաղաքական պերճախօսութեան զարգացումը: **ԱՆՍՈՆ**

Պ Ո Լ Ի Վ Ի Ա

(ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Գրեց: ՄՈՎՍԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Ա.

Մ.Պ.— Այս գրութեան հեղինակը Վասպուրականցի է, Մաշտակ գիւղէն: 1896ին որբ մնալով կ'ընդունուի Վանի ամերիկեան գիշերօթիկ վարժարանը, որուն դասընթացքը կ'աւարտէ 1907ին:

Ժամանակ մը կը ծառայէ նոյն հիմնարկութեան հիւանդանոցին մէջ իբրև հիւանդապահ եւ բուժակ: Յետոյ՝ ղեկադործութիւն սորուելով, կը գտնայ Հայաստանի միութեանը Տոքթ. Ընթրի հմուտ օգնականներէն մէկը:

Վանի հերոսամարտին կը կորսնցնէ իր կողակիցը եւ անչափահաս իր միակ աղջկան հետ, Վանի ընդհանուր նահանջին, կ'անցնի Կովկաս: Քանի մը տարի ետք, Պոթոմի վրայով, կը հասնի Պոլիս, այնտեղէն Մ. Նահանգներ մեկնելու համար:

Բախտը, սակայն, զինք կը նետէ Հարաւային Ամերիկա: Պուէնոս Այրէս կուգայ 1919ի աշնան:

Այստեղ հազիւ կը գտնէ քանի մը ցան ու ցրիւ եւ անգործ Հայրենակիցներ, որոնց աննախանձելի վիճակը տեսնելով, կ'որոշէ հեռանալ Պուէնոս Այրէսէն եւ իր բնակութիւնը հաստատել ներքին նահանգները: Երկար ժամանակ թափառական կեանք մը կր վարէ նահանգէ նահանգ եւ դաւառէ մաւառ: Փոփոխական կերպով կ'ապրի Չաքոյի եւ Ֆորմոզայի չրջանները, վերջնականապէս հաստատուելով Սուխույի մէջ: Ետևում սիրելի կը դառնայ իր չրջապատին, եւ գրաւելով տեղական իշխանութեանց համակրութիւնը, կր յաջողի հիմնել իր սեփական դեղատունը: Իր փառքի օրերուն կ'ամուսնանայ տեղացիի մը հետ, որմէ կ'ունենայ չորս աղջիկ դուստրներ, Վանուհիէն դատ: Ետանդուն կերպով կը մասնակցի քաղաքական կեանքին, աչքառու դեր խաղալով: Ամբողջ քսան տարի կը վարէ իր պատկանած ընկերվարական կուսակցութեան քարտուղարութիւնը:

Իշխանութեանց փոփոխութեան ընթացքին, երկու անգամ կը կողոպտուի, թշուառութեան մատնուելով: Նեղ օրերուն կինը զինք կը լքէ եւ տեղացիի մը հետ ամուսնանալով իր հետքը կը կորսնցնէ: Արդէն ծեր եւ տառապած, Մովսէս Եղիազարեանը կը խնամէ ու կը մեծցնէ իւր հինգ աղջիկ դուստրները, որոնց խնամքով եւ գուրգուրանքով իւր աչքերը կը փակէ 1949ին:

Քառորդ դար առաջ հետաքրքրական ուսումնասիրութիւններն արտադրած է «Արտենիա»-յի մէջ, առանձնապէս հնդիկներու կեանքին, պատկերաչափութեան անոնց կեանքը, սովորութիւնները, հաւատալիքները, բնութանկան կազմը եւ բարոյական նախնական ըմբռումները:

Լիալէս կը ճանչնար Արժանթինը եւ սահմանակից Հանրապետութիւնները: Երջած է նաեւ Պոլիթիա, ուր եւ դրած է այս ուսումնասիրութիւնը, որ, սահաւորիկ, կը ներկայացնէ մեր ընթացողներուն իբրև անհետացած հայու մը միակ ժառանգութիւնը:

* * *

Պոլիթիա Հարաւային Ամերիկայի միջցամաքային երկիր մըն է, սահմանակից ըլլալով Արժանթինի, Զիլէի, Փերուի, Պարագուէ եւ Փարակուայի հանրապետութեանց: Զուրկ է ծովային հաղորդակցութենէ, թէև էջուտ-

Թորին շատ մօտ է, բայց, շնորհիւ իր աշխարհադրական դիրքին, զանազան կլիմաներ ունի։— Խիստ ցուրտ, բարեխառն եւ չափազանց տաք։ Այս պատճառով իր արտադրութիւնները ալլազան են եւ առատ։ Այլ խօսքով, Պոլիվիան երկիր մըն է, օժտուած բնական հարստութիւններով, եւ հրաշալիքներով։ Թէեւ Արժանթինայէն փոքր է, բայց, շնորհիւ Լոս Անտէիի հսկայ լեռնաշղթային, անկէ ետ չի մնար իր բնական հարստութիւններով եւ արտադրութիւններով։ Ունի յորդառատ դետեր, սառնորակ աղբիւրներ, հսկայ անտառներ եւ տարածուն դաշտեր անմշակ պանանի, Թէյի եւ պողատու ծառերու, մանաւանդ ընկուզենիի։ Ունի նաեւ բժշկական անհաշիւ եւ ալլազան բոյսեր։ Նշանաւոր են խէժ արտադրող ծառերը, նոյնպէս անմշակ, փոռած տնտեսման տարածութիւններու վրայ։

Իր Ժողովուրդին պէս խոպան է այս երկիրը, որ եթէ քաղաքակրթութեան մեթոտներով մշակուի, կը դառնայ երկնային դրախտ մը։

Երկրին տաք գօտիները ուելի արդիւնաբեր են, մանաւանդ անտառները, որոնք լեցուն են մեզ ծանօթ եւ բոլորովին անծանօթ պողատու ծառերով։ Մինչ Չաքոյի եւ Ֆորմոզոյի հնդիկները հարկու կ'ապրին որոտորութեամբ եւ ձկնորսութեամբ, այնինչ Պոլիվիայի տեղացիները կը լողան բնական արտադրութեանց ճոխութեան եւ առատութեան մէջ։

Առանց վարելու, ցանկու եւ մշակելու, բնիկները ունին այն ամէնը, ինչ որ ուրիշ երկիրները չեն կրնար ձեռք բերել տքնաշնայ աշխատանքով։ Պոլիվիան յետամնաց է համեմատութեամբ միւս հանրապետութեանց, եւ այդ կարելի է բացատրել երկու գլխաւոր պատճառներով, Նախ, ինչպէս ըսինք, միլերիկայային բլլալով բոլորովին կտրուած է ծովային հաղորդակցութենէն, Հետեւաբար լայնօրէն չփում չունի Եւրոպայի եւ Ասիոյ քաղաքակրթ Ժողովուրդներուն հետ, որոնց ներգաղթով կրնար բարեփոխել իր տնտեսական վիճակը եւ ընկալութեան որակը։

Բացի այդ, բնիկները յատուկ ատելութիւն ունին օտարներուն հանդէպ։ Անոնց համար անտանելի են, մանաւանդ, օպիտակամորթները։ Այս երկիրը ճիշտ հակապատկերն է Արժանթինի, որ լայնօրէն ներգաթի քաաքականութիւն կը վարէ եւ հակապական քայլերով շտապ կ'երթայ։ Թէեւ Պոլիվիան բնականօրէն եւ արուեստական կերպով կղիտացած է, բայց անխիղճօրէն կը շահագործուի օտար փոքրաթիւ դրամատէրերէն։ Առաւելապէս ամերիկացի, անգլիացի եւ դերմանացի մեծ ընկերութիւններն են, որ կը ծծեն այս երկրին հիւթը։

Երկրագործական եւ գելիգատնտեսական արտադրութիւններէն պատ, երկիրը օժտուած է հանքային հարստութիւնով։ Ունի ոսկիի, արծաթի, կասպրի, Ժիպակի եւ արսենիքի առատ հանքեր, ինչպէս եւ անսպառ քարիւղ, որ կը շահագործեն օտար ընկերութիւնները եւ դրամատէր անհատները, չափազանց ձեռնտու պայմաններով։ Կառավարութիւնը շատ չնչին վարք մը կը ստանայ։

Այս մեծաքանակ ընկերութիւնները, որպէսզի կրնային իրենց հանքային արտադրութիւնները աւելի արագ եւ խիստ նպաստաւոր պայմաններով արտահանել, Ժամանակին դրդեցին տեղական կառավարութիւնը, որ զէնքի ուժով ծովային ճամբայ մը բանայ։ Եւ տեղի ունեցաւ պատերազմը ընդմէջ Պոլիվիայի եւ Փարակուայի։

Չորս տարի այս երկու փոքրիկ պետութիւնները զիբար բզկտեցին եւ միասուրբ զարձեալ Պոլիվիան եղաւ։ Տարօրինակն այն է, որ պատերազմէն շատ առաջ, Փերուի եւ Չիլէի կառավարութիւնները արամադէր էին Պո-

լիվիայի զիջել իրենց հողերէն շերտ մը, որպէսզի այս եղբայրական հանրապետութիւնը ծովային ելք մը ունենայ Ռազմազականի վրայ: Իսկ Պոլիվիան այս առաջարկին ընթացք չէ տուած, պատճառաբանելով, որ ինք կ'ուզէ ծովային ելք մը ունենալ Ատլանտեան Ովկիանոսի վրայ:

Այս հարցը ցարդ առկախ կը մնայ: Իրօք յուզիչ է Ձիլէի եւ Փերուի եղբայրական կեցուածքը, թերեւս միանգամայն անբմբհելի եւրոպական հասաէր որեւէ պետութեան համար:

Հակառակ Պոլիվիայի չկամութեան, վերոյիշեալ երկու հանրապետութիւնները, Ձիլէ եւ Փերու, ապացուցանելու համար իրենց մարդասիրութիւնը եւ անշահախնդրութիւնը, մինչեւ այսօր ալ մաքս չեն վերցնիր Պոլիվիա ներմուծուող ապրանքներէն: Ի՞նչ է, ուրեմն, Պոլիվիայի չկամութիւնը, ընդունելու համար ստալինիական եղբայրական արհաւիրութիւնը: Իր թէ Պոլիվիան չառ հետո մամանակներու մասին կը մտածէ, Աշլտանտեանը նախընտրելով իրբեւ ծովային ելք:

Պէտք է ընդունիլ, որ այս կողմացած եւ փոքրիկ երկիրը, սահմանակից հանրապետութեանց համեմատութեամբ, աւելի ռազմապաշտ է: Տիրող տարրը դիւռնորականութիւնն է: Բնակչութեան չորրորդ մասը կ'ապրի կառավարութեան հաշտոյն իրբեւ դիւռնորական կամ պետական պաշտօնեայ: Ունի քաղաքի եւ վարժ բանակ մը, արդիական զէնքերով սպառազէն:

Ձաքոյի չորս տարուան պատերազմը, մղած Փարակուայի դէմ, շտտ ուղի նստաւ իրեն: Հաշիւ եղած է, որ այդ պատերազմի ծախքերով կարելի էր արդիական մեծ նաւահանդիստ մը կառուցանել: Ոչ միայն նիւթական, այլ մարդկային կորուստն ալ շատ մեծ է: Երկիրը լի է կազերով, կոյրերով եւ հաշմանդամներով, ինչպէս եւ չքաւորութիւնը իր զաղաթնակէտին հասաւ: Սոսկալի եղաւ նաեւ դրամական անկումը: Արժանթինի մէկ փետօն արժէր Պոլիվիական տասը փետօ, մինչդեռ, պատերազմէն առաջ, այս երկու հանրապետութեանց դրամները գրեթէ համարժէք էին:

Պոլիվիան կողմացած եւ անհաղորդ ըլլալով քաղաքակրթութեան, գրեթէ մնացեր է կոյս վիճակի մէջ: Բնակիչները գրեթէ անխառն հնդիկներ են, իրենց քաղաքակրթութիւնը զուտ հնդկական է, աննշան փոփոխութիւններով եւ ազդեցութեամբ:

Պոլիվիայի վայրենի թէ քաղաքակրթուած բնիկները Արժանթինի բնիկներէն շատ քիչ կը տարբերին իրենց ապրելակերպով, նիստ ու կացով եւ սովորութիւններով: Անոնք արիւնակիցներ են եւ դեռ կը պահեն հնդիկ նախնական ցեղերու որոշ տիպը եւ նկարագիրը:

Սակայն կայ տարբերութիւն մը, որ անմիջապէս նկատելի է: Արժանթինի հնդիկները, օգտուելով այս երկրի աննախընթաց յառաջդիմութեան, աւելի նստակեաց են, աշխատասէր եւ պատուախնդիր: Վարժուած են իրենց խօսքը եւ պայմանագրութիւնը յարպել եւ գործադրել: Ունին նաեւ բարոյական որոշ ըմբռնումներ, որոնք զիրենք վստահելի կը դարձնեն:

Երկիրը բարձրաւանդակ մըն է, ծովի մակերեսէն 2000-3400 մետր բարձրութեան վրայ: Այս պատճառով թոքերէն տկարները յանկարծմամբ կ'ըլլան, Բացառապէս օտարներն են ենթակայ այս հիւանդութեան, որու նշանները յայտնի են: Որեւէ մէկը հրք ունենայ ստամոքսի, դուռխի եւ ծոծրակի սաստիկ ցաւեր, ինչպէս եւ օրոխառնուք, մահը վայրկեանական է:

Բնիկները, առաւելապէս կը զբաղին խաշնարածութեամբ: Անասնաբուծութիւնը զարգացած է: Երկիրը լի է միլիոնաւոր ոչխարներով. անհաշիւ է

նաեւ թիւը կողերու, արջառններու եւ հշերու: Փոքրաթիւ օտարականները, մեծ մասամբ, կը զբաղին հանցերու շահագործումով:

Ասկէ հարիւրաւոր տարիներ առաջ, Պոլիվիայի հանցերը, առաջին անգամ ըլլալով, սկսած են շահագործել Կաթողիկէ Յիսուսականները, որոնք, հետզհետէ, իրենց դիրքը զիջած են անգլիացի եւ ամերիկացի դրամատէր մեծ ընկերութեանց: Ասոնք արգենական միջոցներով եւ առասպելական շահերով կ'օգտագործեն հանքային հարստութիւնները, կառավարութեան չնչին շահ մը ձգելով:

Տեղացիներուն համար սովորական դրաղում մըն է նաեւ դետերէն ոսկիի փոշի հաւաքելը: Ամրան երբ դետերը կը սկսին յորդիլ, որոշ ընկերութիւններ եւ ընակչութիւնը ընդհանրապէս աւազներ լուանալով ոսկիի հատիկներ կը հաւաքեն: Աղքատ դասակարգը այս դործը կը կատարէ շատ չնչին վարձքով:

Պոլիվիայի այն մասը, որ սահմանակից է Չաքոյի, Փարակուայի եւ Պերուիի ու հաւասար է ծովի մակերեսին, չափազանց տաքեր կ'ընէ, մանաւանդ էջուատորին մօտ շրջանները:

Յատկապէս այս գօտիները, կլիմային համեմատ, առատ են բնական բարիքներով, անմշակ եւ կոյս: Այս շրջաններուն մէջ կ'ապրին բոլորովին վայրենի ու մերկ հնդիկ ցեղախումբերը, օգտուելով ընութեան բաղամտեանակ բարիքներէն: Մինչդեռ Արժանթինի եւ յատկապէս Չաքոյի եւ Տորմոդայի սահմանակից մասերուն մէջ ապրող հնդիկ վայրենի ցեղերը, անօթութենէ տառապելով, յաճախ կը խուժեն քաղաքակրթուած մասերը, արժանանալով նստակեաց բնակչութեան ստեղծութեան:

Այս վայրենիներէն նշանաւոր են՝ ձիբիվամօ, Նօփօմա, շորոքօ, Թուվաս, Մանտալօ եւ Կիզվէտ ցեղերը, որոնցմէ առաջին երկուքը բաւական քաղաքակրթուած են, Գրիստոնէական կրօնքով:

Կ'ապրին նախնական խրճիթներու մէջ՝ դլխաւոր զբաղում ունենալով երկրագործութիւն եւ դերձակութիւն: Բրուտ են միաժամանակ եւ կաւէ դեղցիկ ամաններ կը շինեն միւս ցեղերուն վաճառելու համար: Միւս ցեղերը դեռ վայրենի են եւ բոլորովին մերկ: Ամենէն յետամնացը Կիզվէտ ցեղն է, որ բացօթեայ կ'ապրի, իսկ լաւազոյն պարագային՝ կը բնակի ծառի կոճղի կամ քարայրներու մէջ: Այս ցեղն ունի հաստ եւ կարծր մազեր, խառնիխուռն թափուած գլխին: Կը սնանին պտուղներով եւ բոյսերու արմատներով:

Հնդիկ այս վեց ցեղերը, նոյնիսկ քիչ մը քաղաքակրթուած Կօժա ցեղն ալ մէջն ըլլալով, գլխէն զատ մարմինի մնացեալ բոլոր մասերը անմազն են, այնպէս որ անոնց այրն ու կիներ իրարմէ կը տարբերին միայն ծննդական գործադրանքներով:

Ունին արտօրինակ սովորութիւններ: Օրինակ, չափազանց լուկեաց են: Եթէ պատահի մէկու մը հետ խօսիլ՝ հազիւ կը զիջանին խօսիլ կամաց, գրեթէ անլսելի ձայնով:

Հիծելութիւն չեն սիրեր, աւելի կը նախընտրեն քաղել: Ունին անհաշիւ եւ սրկուռ հշեր, բայց էջ նստելու սովորութիւն չունին: Անոնց կիները բեռնակրութեան մէջ սողուռ են եւ վարժ:

Տեսած եմ տասնեակ քրտմեզր կտրող հնդիկ կիներ, որոնք էշերին առջեւ կը քշեն: Աւանակը հազիւ քսան քիւօ ծանրութեամբ բեռ մը կը կրէ, իսկ կիներ չորեքպատիկ բեռան տակ կը քալէ. ո՛չ էշը կը հեծնայ եւ ո՛չ ալ իր բեռը իշուն վրայ կը դնէ: Այսպէս, օրերով եւ նոյնիսկ շաբաթներով կը ճամբորդեն դահուռակ: Միայն տեղափոխութեան ընթացքին չէ որ այս կերպ կը վարուին: Մասնաւորապէս Կօժա հնդիկ կիները անպայման բեռ մը ունենալու

են իրենց կոնակր: Գուրար, տուներու եւ Հիւրանոցներու մէջ, ծառայութեան պահուն, Կօծա կիրք իր անչափահաս զաւակը կապած կոնակը լուսաց կ'ընէ, կ'արդուէէ եւ սենեակներ կը մարքէ: Նոյնիակ սօնական օրերուն, եթէ ինճոյքի կամ պարի երթայ, իր զաւակը կոնակն է միշտ: Միտտեղ կը պտուկին դետնի վրայ եւ միտտեղ կ'ուտեն դետինը նստած: Իրենց ցեղային կերակուրը կզիպտացորենի եւ բակլայի խաշած հատիկներ են: Մեծով պզտիկով խման են: Ողբից ըմպելիներու սիրահար են եւ ալքուր կը գործածեն ջուրի պէս:

Կրօնքով կաթոլիկ են եւ չափազանց մոլեռանդ: Կղերը մեծ հեղինակութիւն ունին եւ անոր խօսքը կ'ընդունուի իբր պատգամ: Ամուսնութեան պայագային, քահանային խորհուրդը անհրաժեշտ կը սեպեն: Եթէ օրեւէ պատճառով ժխտական պատասխան ստանան՝ անկարելի է որ ամուսնութիւն կնքեն:

Բնական է, այս ցեղիկն իւրաքանիւրն ունի իր յատուկ լեզուն կամ բարբառը: Կօծաները իրենց լեզուն կը խօսին աւելի դիւրին քան սպաններէնը:

Նախնական մարդու կատալի բնազդներով իբր հակառակ են, նոյնիակ սխերիմ թշնամի:

Արդէն ըսի, որ Պոլիվիայի հնդիկները դիւրութեամբ կ'ապրին, վասնդի իրենց բնական անտանները լի են բնութեան բարիքներով, առկէ գաս վարժ են որորդութեան եւ փկնորսութեան: Ունին քաջաոյի, պանանի, թէյի եւ վայրի պտուղներու անհաշիւ տունկեր, որոնցմէ կ'օգտուին: Կան ինքնարոյս ծխախոտի եւ ընտիր բամբակի սնահաման տարածութիւններ, բոլորովին անմշակ եւ թողլքուած: Նշանաւոր են, մանաւանդ, քոքայինի տունկերը, որոնց տերեւները շատ յարկի են: Վայրերի թէ քաղաքակիրթ հոծ գանգուճաներ սովորութիւն ունին ծամելու այդ տերեւները իբր դերագոյն հաճոյք: Խիստ վնասարար մոլութիւն մը, որ հետզհետէ մուտք գործած է նաեւ Արժանթինի նահանգներէն Խուսուլի, Սալթայի եւ մասամբ Թուզումանի շրջանները:

Քոքայինի տերեւ ծամելը ոչ միայն ընթացիկ սովորութիւն մըն է, այլ կը համարուի մեծագոյն հիւրասիրութիւնը: Տուներու եւ Հիւրանոցներու մէջ, ինչպէս ամէն տեղ, եւ մանաւանդ պաշտօնական ընդունելութեանց ընթացքին, հիւրերուն կը մատուցուին այդ տերեւները ի վերջին օրիք, քոնեակի եւ այլ ընտիր խմիչքներու:

Պանդուկապետները իրենց հիւրերը կը պատուեն քոքայինի տերեւներով, մանաւանդ ճաշէն անմիջապէս ետք: Հասարակ գործաւորը, մասնաւորապէս հնդիկը, չի աշխատի եթէ գործատէրը նախապէս չլճարէ քոքայինի դրամը: Ինչպէս Չինաստանի մէջ տարածուած է հաշիշի կամ խաշխաշի գործածութիւնը եւ առեւտուրը, այնպէս ալ Պոլիվիայի ամենաշահաւոր արտադրութիւնը քոքայինն է:

Ատեն մը Արժանթինի կաւապարութիւնը մեծ տուրքեր դրաւ այս ապրանքին վրայ, մասամբ ժողովուրդը դերձ պահու համար այս մոլութենէն եւ մասամբ ալ արդիւիւր մեծաքանական ներմուծումը այդ երկիր: Անոր առեւտուրը թողուց միայն դեղարաններուն: Բայց չյաջողեցաւ, որովհետեւ Խուսուլայի ներկայացուցչական տունը դէմ կեցաւ այս օրէնքին զանազան պատճառներով: Առանց այդ ալ այս արդււրը չէր կրնար երկար տեւել, քանի որ մաքանները ի վիճակ էին այս երկիրը ներմուծել պահանջուած քանակութեամբ քոքայինը, մանաւանդ որ մոլութուրդը վարժուած է անոր գործածութեան:

Փամասակ մը քոքայինի զելուն Պոլիվիայի մէջ արժէք մէկուկէս փեսօ, մինչ Արժանթինի մէջ մէկ զելուն կը ծախուէր 4-5 փեսոյի:

Ուրախալին այն է, որ Արժանթինի բնակչութեան մեծագոյն մասը դերձ է այս կործանարար մոլութենէն:

ՏԵՆԵԿԱԳԻՐ ԵՒ ԿՈՉ Հ.Մ.Ը.Մ.Ի
ՍԿԱՌԻՏ. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

(Կարգացում և հավելումներն օրը)

Այսօր, Սեպտ. 8/ին, Հ.Մ.Ը.Մ. սկսուածների կազմակերպման տաշին տարեկարծին օրն է: Մնողական Խորհուրդը հանոյն ունի ներկայացնելու իր գործունէութիւնը: Անցեալ տարի, Հոկտ. 21/ին, Հ.Մ.Ը.Մ. Արիական Խորհուրդի հրաւերով տեղի ունեցաւ նորակազմ սկսուածներու ծնողական ընդհանուր ժողովը: Սոյն ժողովին մասնակցելու հրաւիրուած էր Հ.Մ.Ը.Մ.ի Վարչական կազմը և վեթերան սկսուածներէն Տէր Շաւարշ քչնյ. Մեհրապեանը, Գ. Գ. Արտաշէս Պարսմէան, Կարօ Շահինեան, Կարօ Գալիկեան, Լեւոն Գամեան: Արիական Խորհուրդի Ընդհանուր պետ եղբ. Կարպիս Տէր Մհարոպեանը ըստ որ, Արիական Խորհուրդը պէտք ունի նորակազմ սկսուածներու ծնողաց թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական աջակցութեան: Մի ժխն ձեր գործակցութեամբ կարելի է խտացնել սկսուածական շարքերը:

Վերոյիշեալ հինգ վեթերան սկսուածներու մասնակցութեամբ կազմուեցաւ Մնողական Խորհուրդը, նախագահ ունենալով եղբ. Ա. Պարսմէան, փոխ-նախագահ՝ Արիս Եովհաննէսեան, Ատենադարուհի՝ Սիրանոյշ Թադէոսեան, փոխ-ատենադարուհի՝ Եսթեր Թաճեան, դանձապահուհի՝ Սոյիսէ Փափագեան և իրհրդականներ՝ Սիրարթի Աճէմեան, Հայկանոյշ Պէրպէրեան, Ալլանի Բարսղոմէան, Նուհուֆար Բարեան. Գ. Գ. Ս. Զորպահեան, Խաչիկ Փափագեան: Սոյն ժողովին որոշուեցաւ նիւթական միջոցներու հարթաթման ուսումնասիրութիւնը թողնել Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութեան և Արիական և Մնողական Խորհուրդներուն: Համառօտ կերպով, Մնողական Խորհուրդիս տասնամեայ գործունէութեան պատկերը հետեւեալն է—

Նախագէտ, Պարսմէան եղբայրները բարի եղան յիտուն ձեռք սկսուածական համազգեստ նուիրել: Մնողական Խորհուրդի անդամուհիներէն Սիրարթի Աճէմեան և Նուհուֆար Բարեան նոյն սիրայօժարութեամբ նուիրեցին քառասուն ձեռք զգեստ դալիկներու համար:

Ինչպէս ձեր հասարակութիւնը կը յիշէ, յիտուն սկսուածներ և քառասուն դալիկներ, իրենց համապատասխան զգեստներով, Նոյեմբեր 11/ին, Խամոս Մեխիսայի մարզադաշտին մէջ ըրին իրենց առաջին տողանցքը: Այդ օրը մարզադաշտը ուխտատեղի մը վերածուած էր: Երկու հարսէ տելի հայրենակիցներ եկած էին քաջալերելու իրենց զաւակները:

Նաև մատաղի օրը, որ զապուծիս պատմութեան մէջ եզակի է իր յաղողութեամբ: Տեղի ունեցաւ մատաղօրհնէք և բացօթեայ Պատարագ: Այդ անժողանքի օրը ձեր զաւակները սկսուածական խոստում ըրին, հրապարակաւ: 25 զգեստաւորուած սկսուածներ, 12-14 տարեկան, հարողութիւն ստացան հետեւեալ խոստումը բնելով.

Պատուոյս վրայ կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ և ծառայել հայրենիքիս, միշտ օգնել օրիշին և գործել իբր պարտականութեամբ գիտակից արի և վեհամեծ մարդ. հնազանդիլ Հայ Սկսուածի Դաւանանքի:

Ամէն խոստում ընող սկսուած ստացաւ զմելի մը իր ծնողքէն իբր նուէր, և վկայագիր մը՝ Արիական Խորհուրդէն: Նոյն օրը, կէս օրէ հտք, Մնողական Խորհուրդի բոլոր սկսուածները և դալիկները ծնողաց պատրաստութեամբ, թէյասեղան տուին Հ.Մ.Ը.Մ.ի Վարչական կազմին, Արիական Խոր-

Հուրդին, Սկսուտներուն եւ ծնողաց: Նոյն օրը, նմանապէս, արձանագրուեցան յիսունէ աւելի նոր սկսուտներ եւ դասլիկներ:

Յաջորդաբար, ծնողական Խորհուրդի անդամները սկսուտներու եւ դասլիկներու ծնողները եւ շատ մը ազգայիններ ըրին դամական նուէրներ, որոնց ցտիկը. ժամանակին մամուլով յայտարարուեցաւ: Ծնողական Խորհուրդէն ելը. Ա. Գամեան նուիրեց Ֆանֆառի գործիքները, որպէսզի օր առաջ կազմուի սկսուտ նուագախումբը: Բայց եղած նուէրներով չէր կարելի բանակում կազմակերպել. վրասներու, խոհանոցի եւ ուրիշ անհրաժեշտ պիտոյքներու գնման համար աւելի մեծ դումարի պէտք կար: Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութեան համաձայնութեամբ, որոշուեցաւ հրատարակել 1957 թ. Օրացոյց - Տարեցոյցը, պատկերազարդ, երկու հազար օրինակ, յայտնի նկարիչ Պր. Պ. Այվազեանի գեղանկարով:

1956 Դեկտեմբեր 15ին, տեղի ունեցաւ ծնողական երկրորդ ընդհանուր ժողով-Քէյսեղանը, ուր կազմուեցան տասն յալճեմախումբեր, Օրացոյց և Տարեցոյց սպառելու համար: Մեծ յաջողութեամբ, գաղութիս ամենէն հասարակունէն մինչեւ ամենէն համեառ քաղաքացին, քաջախիղց մեզ եւ ունեցանք վաթսուն հազար փեսոյի պատկանելի դումար մը: Օրացոյցի ծախսէն դուրս, մօտաւորապէս 43.000 փեսօ յատկացուեցաւ բանակումի համար վրասներ եւ ուրիշ պիտոյքներ գնելու: Ինչպէս նաեւ վերջերս գնուեցաւ եօթ նոր դործիքներ Ֆանֆառի համար: Յոյս ունինք, որ մօտիկ ապագային, սկսուտներու Ֆանֆառը Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտի եւ գաղութիս զարդը պիտի ըլլայ, աղայային հանդիսութեանց նոր փայլ տայու:

Բանակումը տեղի ունեցաւ Աշարեան Եղբ. Մօրենոյի ամառանոցը, Փետրուար ամիսին: Հակառակ աննպաստ օդին, եօթանասունէ աւելի սկսուտներ եւ դասլիկներ հայկական մթնոլորտի մէջ քայրեցան, մեր աշխատասէր եւ անձնագործ Արիական Խորհուրդի Ընդհ. Պետ եղբ. Կարպիտ Տէր ՄԼերուպեանի եւ տասնհակ առաջնորդներու ղեկավարութեամբ որոնք են՝ Եղբայրներ՝ Պարոյր Զանիկեան, Գասպար Աճեմեան, Յարութիւն Ծառուկեան, Պետիկ Թէքիրտողեան, Միքայէլ Եմէնէճեան, Համարձում Մատթէոսեան, Գուսնիկ Եմէնէճեան, Արամ Գարիպեան, Օհան Գարիպեան, Աւետիս Բէօրտողեան: Բանակումին իրենց սիրալոյսով մասնագործիքներ Տարարը քննյ. Մեհրապեան, Ծնողական Խորհուրդի նախագահ Ա. Պարոսեան, Կարօ Եահինեան եւ աշխատասէր ու գործունէայ Խաչիկ Փափագեանը, Պր. Արմէն Կիրակ եւ Տիկ. Չորպանեան երգի դասեր տուին, իսկ բժիշկներ Մ. Արեղբեան եւ Հրաչ Յովակիմեան իրենց բժշկական ծառայութիւնը ի սպաս դրին մասնակներուն:

Փետրուար 24ին, Հովանաւորութեամբ Սրբազան Հօր եւ մօտ հինգ հարիւր համակիր Հայրենակիցներու եւ ծնողաց, տեղի ունեցաւ փակման հանդէսը, ինչպէս արդէն տեսաք ժողովունի վրայ: Նոյն օրը Ծնողական Խորհուրդէն Տիկ. Ա. Բարաղամեան 12 ձեռք նոր զգեստներ նուիրեց բարձրահասակ յուկուտներու: Իսկ Ծնողական Խորհուրդը իր անհատական ծախսով նուիրեց չրամաններ Առաջնորդ եւ փոխ առաջնորդներու:

Այսպէս, զարգելի հասարակութիւն, եօթանասունէ աւելի սկսուտներ եւ դասլիկներ, քանովէ՞ Օր հետո իրենց ծնողներէն: Կայրեցան հայկական մթնոլորտի մը մէջ, - խօսեցան, կարդացին, դրեցին, երգեցին հայերէն, փաղաքցին եւ աշխատասէր իրենց տարիքին համապատասխան, պոէմ ունեցան երեւան բերելու ընկերատիրութեան զգացումը, եւ որ էական է, վարժուեցան կարգապահաւրեան, որ սկսուտիզմի առաջին պայմանն է: Բանակումէն

յետոյ Մնոզական Պորհուրդը շարունակած է իր հերթական ժողովները մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Վարչութեան ներկայացուցիչներէն Գ. Գ. Յակոբ Մարտիրոսի և Կարապետ Քոփայեանի :

Կաղմակերպած է կարեւոր դասախօսութիւն մը «Հայ Կեդրոն»ի մէջ : Դասախօսած է նախկին սկսուստակտ, ներկայիս գրողէս եւ բարերար եղբ. ձորձ Մարտիրոսի, նիւթ ունենալով՝ Սկսուստիկովի Կուրիւմը : Այս առթիւ մեր արժանաւոր հիւրը վարձատրուեցաւ բարձրագոյն շքանշանով եւ յիտուն հազար փետո նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի :

Այս վերջին երկու ամիսներուն զբաղած ենք այս հանդէսի պատրաստութեամբ, ինչպէս եւ վաթսուն ձեռք նոր զգեստներ պատրաստած ենք նորապիտ սկսուստներուն բաժնետէր համար : Օգոստոս 11ին տեղի ունեցաւ մեր վերջին ընդհանուր ժողովը, ուր միաձայնութեամբ որոշուեցաւ յառաջիկային գանձակ սկսուստ. արարելի եւ կիրակի օրուան ճաշէ ծախար : Իսկ այն ծնողները, որոնք հնարաւորութիւն չունէին զգեստի, կիրակի օրուան եւ բանկուով ծախար վճարել, Հ.Մ.Ը.Մ.ի պատուական Վարչութիւնը եւ Մնոզական Պորհուրդը միասնաբար յանձն առած են հոգալ անոնց փոխարէն, որքան ալ շատ բոլոր անոնց թիւր : Կուզենք որ բոլոր Հայ փոքրիկները, անխոր, ութը տարեկանէն սկսած, տրձանադրուին եւ յաճախեն Հ.Մ.Ը.Մ.ի մարզապաշար :

Յարկելի հասարակութիւն, Մնոզական Պորհուրդը օգտուելով այս պատուութենէն, կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները բոլոր անոնց, որ բարոյալիս եւ նիւթալիս բաշար հանդիսացան եւ օղնեցին սկսուստական դորձին, ինչպէս նաեւ Սրբոյց-Տարեցոյց սպասող յանձնախումբներուն եւ Աշարճան Նորայնութեան, որ սիրաշօքոր տրամադրեցին մեզ իրենց ամառանոցը, բոլոր յարմարութիւններով :

Սկսուստական շարժումը սկսած է ինչպէս ամէն գործ ա՛յս եւ ո իր սկզբնական շրջանի դժուարութիւններէն կ'անցնի, բայց վաստակ ենք թէ Հայ գիտակից հասարակութիւնը եւ ազգային հաստատութիւնները, տեղեակ ըսկաուստական սկզբունքներուն, իրենց օժանդակութիւնը պիտի բերեն մեզ. եւ բոլոր շրջաններու հայկական հաստատութիւններու դռները լայն պիտի բացուին մեր սկսուստներու եւ գայիկներու առջեւ, որպէսզի անոնք ի մի համախմբուին, կաղմակերպուին եւ մեր պատրաստուած եւ անձնադո՛ սկսուստ խմբակներուն ղեկավարութեամբ կանգնին Հ.Մ.Ը.Մ.եան Սկսուստի բարձրութեան վրայ, ինչպէս եղած է անցեալի մէջ հիմնադիր Գրիգոր Յակոբեանի, Շաւարշ Գրիսեանի, Վուսան Զեբազի եւ ուրիշներու զեկաւարութեամբ եւ առաջնորդութեամբ :

Ճիշտ է, սկսուստիգմը միջազգային կազմակերպութիւն է, որուն հիմնադիրը անդլիացի գորպար Լորտ Պէյուրն-Բաուըլն է : Բայց Հայ Սկսուստի նշանաբանը՝ Բարձրացի՛ր-Բարձրագո՛րբ ոչ մէկ ազգի սկսուստ ունի : Այս մասին Պէյուրն-Բաուըլը կ'ըսէ՝ Հայ Սկսուստի նշանաբանը - Բարձրացիբ - Բարձրացուբ - ճշմարիտ եւ հետեւելիք նշանաբան մը, սրեւէ երկրի սկսուստի համար :

Արդ, Մնոզական Պորհուրդը կոչ կ'ընէ Արժանութիւնի հայութեան անխոր, հետեւել այս ճշմարիտ նշանաբանին՝ Բարձրացի՛ր- Բարձրացու՛րիք : Բարձրանանք հոգով, մտքով եւ բարձրացնենք մեր զաւակները : Մե աշապէս կարելի է ընել միայն այն ժամանակ, երբ Հայ փոքրիկները սկսուստական յարկէն ներս կը մտնեն :

Սիրելի՛ ծնողք, սկսուստիգմը գործնական եւ անփոխարինելի դպրոց մ'ոն



«ՀԱՏԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԱԹՔՆԵՐ»

Թարգմանիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՃԵՏԻՏԵԱՆ
Տպագր. Պէյրուք, 1957

Պէյրուքի մէջ, Գրիստոնէական Զանից Միութեան տպարանէն յաջորդաբար լոյս տեսան Պ. Յովհաննէս Ճետիտեանի կողմէ թարգմանուած գրութիւնները, որոնք անցնող 16 տարիներու ընթացքին լոյս տեսած էին «Հայաստանի Կոչնակ» Շաբաթաթերթին մէջ:

Շատերու բաղձանքն էր, մնայուն դարձնել այդ գրութիւնները, նկատելով որ անոնք դաստիարակիչ են, մասնաւորաբար նոր սերունդին համար, դանոնք գրքի վերածելով: Այս մտածումը գործնականացած է եւ, յաջորդաբար, լոյս տեսած են «Հատընտիր Պատմութեան» Ա. եւ Բ. Հատորները, ներկայանալի տպագրութեամբ:

Իրրեւ մուտք, Վեր. Բ. Յ. Գալֆայիան Ներածական քանի մը խօսքով եւ Թարգմանիչը Լուսարամութեամբ ու նաեւ Իր Մօր ուզողուած Զօնով դիրքը կը բացուի ու կը սկսի Հատորը, ուր ամփոփուած են, կրթիչ ու դաստիարակիչ պատմութեանքները:

Երկու Հատորներն ալ ունին գրեթէ միեւնոյն ծաւալը, կարծէք երկուորեակները բլլային, յար եւ նման իրարու: Առաջինը 254 էջ, կը բովանդակէ 56 պատմութեանք, իսկ երկրորդը՝ 256 էջ, 55 պատմութեանքներ:

Այս գեղեցիկ պատմութեանքները ինծի անծանօթ չէին: Համաշխարհային Բ. Աշխարհամարտէն վերջ, երբ կեանքը բնականոն սիճակ մը ստացաւ, մեզի այ հասնի արտասահմանի հրատարակութիւնները, Յունաստանի մէջ: Առաջին պատեհութեամբ նշմարեցի Պատմութեանք Ժողովուրդի, ու մասնաւոր ուշադրութեամբ սկսայ կարդալ: Այնուհետեւ, այլեւ սկսայ փնտռել այդ ընտիր էջերը: Ամէն անգամ, երբ ձեռք անցնէր «Հայաստանի Կոչնակ» Շաբաթաթերթը, առաջին գործս կ'ըլլար գտնել անունը յարգելի թարգմանիչին: Եւ երբ հանդիպէի անոր, անօթի մէկու մը նման կ'առանձնանայի, կամ ուրիշներու հետ ընկերով, հաճելի ժամ մը կը բոլորէինք, ըսելով.

— Երանի՛ թէ այս էջերը դրքի մը մէջ ամփոփուէին իրրեւ ընթերցանութեան հաճելի նիւթ:

է, ինչպէս իր խոստումը եւ դաւանանքը կը վկայեն: Հետեւինք իր բարձր սկզբունքներուն, մաքուր մտածումով, խօսքով եւ գործով: Քաջաչիւրենիք բոլոր հայրգրիները, որ ութը տարեկանէն սկսեալ մտնեն սկաւառական շարքերը, հայ մեծնալու եւ հայ ապրելու համար:

Մեր խօսքը կը վերջացնենք Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանով՝ Բարձրամանք եւ Բարձրացմանք...:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուրախ ենք ըսելու, որ մեր բարձանքը արդէն իրականացած է :

... Այնուհետեւ, մասնաւոր ընթերցող մը դարձայ այդ Պատմութեան-
բուն, որովհետեւ, երանելի այն օրերուն, երբ լոյսի ծարաւ մեր հոգիները
կը բանայինք իմացական Արեւհերու, մեր անմահ դաստիարակները, — Եղիշէ
Եպս. Գուրբան, Յակոբ Օշական, Գարեգին Պայաճեան, Միքայէլ Շամսա-
նեան, Սուրբն Բարսիսեան, Բրիկեան, Պետիկեան եւ ուրիշներ, արուեստի եւ
գրականութեան սէրը արթնցուցին մեր մէջ եւ մենք, — ուսումնաստենչ պա-
տանիներս, հոգեւին կապուեցանք գեղեցիկ գրականութեան :

Այսպէս կը կարգայինք, օտարներէն Ամետրաւն, Կնուտ Համաուն,
տ'Ամրիչիս, Մաքսիմ Կորֆի, իսկ մեր փոքր Ածուէն, Աւետիս Աւարոնեան,
Աւետիք Խահակեան, Ղազարս Աղայեան, Յովհաննէս Թումանեան, Վրթա-
նէս Փափագեան, Շիրվանզադէ, ինչպէս եւ Հայաստանի ճորագոյն գրողները :

Ասոնց շարքին էր նաեւ Պ. Յ. Ճևտիտեանի Թարգմանական գործերը, ո-
րոնք հաւասարապէս հաճելի եւ ուսանելի են թէ՛ մեծերուն եւ թէ՛ փոքրիկ-
ներուն համար :

«Հատրնտիր Պատմութեան»-ը կուտայ ապրուած կեանքեր, պատահած
դէպքեր, քաջարի հոգեւոր հովիւներ, մարմնաւոր բժիշկներ, բարեկամ, խոր-
բըրդատու դաստիարակներ, իրատեսութեան, համբերութեան, եղբայրու-
թեան, զոհաբերութեան, դիմադրական ուղիի օրինակներ, հայրենիքի,
ծնողքի, զաւկի, համայնքի հանդէպ սրտառուչ սէր, դաստիարակիչ, կրթ-
թիւղի : Գրիտտոնէական ոգիով լիցուն գրութիւններ, մէկ խօսքով, Առաքինու-
թեանց Շտեմարան մըն է «Հատրնտիր Պատմութեան»-ը :

Կարելի է գանոնք դասել դասադրքերու շարքին եւ յանձնարարել ծնո-
ղաց, որ պատմուածքներու մէջ երեւցած օրինակներով գորացնեն ու կերտեն
իրենց գրական կարողութիւնն ու բարոյականը :

Ներկայիս ուսուցողները դաստիարակիչ նիւթերու սովէն կը տառապին :
«Հատրնտիր Պատմութեան»-ը կրնան աղբիւր հանդիսանալ, աշակերտնե-
րուն եւ սկստաններուն, անոնցմէ քաղելու համար առաքինութեանց բազում
օրինակները :

Հանոյք մը պատճառելու համար «Նուասար»-ի մեր ընթերցողներուն,
ահաւաստիք «Հատրնտիր Պատմութեան»-էն պատմութիւն մը էսիսընի կեան-
քէն :

ԱՀԱԶԱՆԳԸ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍԷՃ

(Միշաղէպ մը էտիսընի Կեանքէն)

Երբ 17 տարեկան պատանին ներս մտաւ Հեռագրատան դրասենեակը,
Միշիկըն Փօրթ Հիւրոն քաղաքին, ուժեղ հոտանք մը հովի շտապիւնով դու-
ցեց դուռը իր հտեւէն :

«Այսօր դուրսը շատ ցուրտ չէ... դիտել տուաւ ան, հոն դտնուող Հեռա-
գրական գործակատարին եւ աւելցուց. «Գետին վրայի ստոցակոյտերը պիտի
սկսին հալիլ» :

Միւսը պատասխանեց — «Այսօր հոս ամէն ինչ շատ խաղաղ անցաւ. ժամ
մը կամ անի կայ, որ հեռագրափոխարում վրայ ռուէ քրքռում չէ լսուած» :
Պատանին հանեց իր վերարկուն, թոթուեց ձիւնը իր կօշիկներուն վրա-
յէն եւ գնաց նստաւ Հեռագրական մեքենային առջեւ. բացաւ անոր քանալի-
ները եւ սկսաւ իր մատներով գարնել անոնց վրայ, փորձի Հեռագիր մը գրկե-
լու համար Քանասայի Սարինա քաղաքի Հեռագրատունը, որ Սէյնթ Քլէյ
պետին դիմացի կողմն է, մէկ մղոնի շափ Հեռու Հիւրոնէն. սակայն նկատեց

ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ

ՈՒՄԲԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Գրեց՝ ՇԱԽԱՐՀ ՔՐԻՍՏԵԱՆ

Անցեալ անգամ տեսանք թէ մարմնակրթութեան կամ աւելի ճիշդը ընդհանուր կրթութեան մասին Աթենացիք եւ Սպարտացիք տարբեր ըմբռնումներ ունէին: Ըսինք նաեւ թէ Սպարտացիք ամէն բանէ առաջ մարմնական ուժի սերահար էին, իսկ Աթենացիք ընդհակառակը համոզուելով Ֆիզիքական կարեւորութեանը՝ մտաւորականին հետ ու փոխադարձաբար, երկուքին ալ մեծ կարեւորութիւն կ'ընծայէին: Հին Յոյները զոգային Հանդէսներու ատեն մեծ կարեւորութիւն կուտային մարմնակրթութեան: Այդ Հանդէսները կը կազմակերպուէին ի պատիւ աւտուածներու եւ ներկայութեան հաւաքին բազմութեան մը՝ որ Յունաստանի շորս կողմերէն կը հաւաքուէր: Արդէն Յոյները բնականէն փառքը եւ ցոյցերը սիրող ցեղ, բնական էր թէ Հանձոք պիտի զգային այդ Հանդէսներէն եւ պիտի աշխատէին տեսական Հանգամանք մը առ անոնց:

Միայն Աթէնքի մէջ տարին ութուան օր յատկացուած էր Հանդէսներու եւ խրատնանութիւններու: Այդ Հանդէսներուն ատեն ամէն մարդ հաւասար էր, ու տէրերը իրենց գերիներուն կը սպասարկէին:

Պէտք չէ կարծել թէ Հանդէսները միայն Ֆիզիքական փառքերու յատկացուած էին, այլ նշանաւոր արուեստագէտներու գլուխ-գործոցները կը ցուցադրուէին եւ կը քննադատուէին, ու բանաստեղծներ, պատմաբաններ եւ փիլիսոփաներ իրենց մտքին յղացումները Հանդիսատեսներուն կը ծանօթացընէին, - ու այդ ամէնը ստանու, հաճար դասինեայ պսակ մը, որ գերազոյն վարձատրութիւնն էր:

Հանդէսներու մէջ միտքին եւ մարմինին արուած կարեւորութիւնը անգամ մը եւս կ'ապացուցանէ թէ Յոյները միտքը եւ մարմինը իրարու հաւասար եւ իրարմով ամբողջ անաւելկ միութեան մը երկու հաւասար կէտերը կը նկատէին, ու արդէն, ատով միայն կարեի էր Սոկրատեսներու եւ ուրիշներու գոյութիւնը:

Առաջին Ոլիմբիականը հաստատուեցաւ քրիստոսէ 1453 տարի առաջ ու Յունաստանի ամէն անկիւններէն հազարաւոր մարդիկ կուգային Հանդէսներուն ներկայ գտնուելու եւ յաղթողները ծափահարելու: Առաջին կլլոզներուն վարձատրութիւնը միայն պարզ վայրի ձիթենիի ճիւղ մըն էր, ու արդեօք այդ ձիթենիի ճիւղին աննշանութիւնը չէ՞ որ զայն այնքան յարգի Հանդիսացուցած է:

Ոլիմբիական եւ ուրիշ խաղեր կազմակերպողներուն գաղափարը եւ նըպատակը ժողովուրդին մէջ մտաւոր եւ Ֆիզիքական կրթութեանց սէրը եւ վաւախքը արթնցնել ու վառ պահել եղած է. շահամոլական ձգտումներ մուտ գտած չեն ու միշտ քահարւած նիւթապէս շատ աննշան մրցանակներ բարոյական շատ մեծ նշանակութիւն սենեցած են

Ոլիմբիական խաղերը կը տեւէին հինգ օր, ու սկիզբները մինչդեռ տեսական ձեւ մը ունէին, շուտով Համահելլէն դոյն մը առին, որով շահողները Յունաստանի լաւագոյն մարմնամարզիկներն ըլլալով՝ էրաւամբ արժանի եղան ժողովրդական ցոյցերուն:

Պէտք չէ կարծել թէ ուղուած ատեն կարելի էր Հանդէս սարքել:

Հանդէսներու պակելէն տասնամէկ օր առաջ, ընտրեալ դատաւորները յոգեցնէին

մասնաւոր մունետիկներու միջոցաւ՝ մէկ ամիս տեւողութիւն ունեցող զինադաշար եւ խաղաղութիւն կը յայտարարէին. այդ ամսուան միջոցին ամէն մարդ առանց ամենափոքր երկիրի կրնար ուզած տեղը երթնելու, ու այդ ամսուան ընթացքին բոլոր Յունական քաղաքները իրենց իրարու հետ ունեցած վէճերը կը յետաձգէին միայն զեղեցիկով կարենալ զբաղելու համար:

Սպարտական բանակ մը, որ զինադաշար հրատարակուելէն ետք արշաւանք դորձած էր, ութը սուկի ռուպանքի դատապարտուեցաւ:

Իւրաքանչիւր մրցող պարտաւոր էր մասնաւոր պայմաններ լրացնել, և ատոնցմէ ամենագլխաւորները հետեւեալներն էին. մրցողները պարտաւոր էին հարազատ յունական արիւնէ սերտծ ըլլալ, առնուազն տասը ամիս մարզանք կատարած ըլլալ, ու հանդիսաւորապէս ու աստուածներու անունով երգչուով թէ բոլոր կանոններուն կէտ առ կէտ պիտի հնազանդէին ու զանոնք պիտի յարգէին: Կեղծիք, կրտսեւտական միջոցներ, չափազանց վայրագութեամբ կուռիլ բացարձակապէս արգիւտած էին:

Մրցումներուն մասնակցողներուն միջեւ կատարեալ հաստարութիւն կը տիրէր. ոչ հարստութիւն, ոչ ընկերային դիրք, ոչ պաշտպանութիւն, ոչ ալ կաշառք կարող էին դատաւորներուն խղճմտանքը քննանել: Ամէն մարդ հարուստ թէ աղքատ, զերի կամ ազնուական նոյն իրաւունքները ունէին, եւ պարտաւոր էին ապացուցանել թէ որեւէ դայթակղեցուցիչ կամ անպարկեշտ քրարքներուն մէջ չէին դանտուած եւ իրենց ծնողքին օրինաւոր միացումէն դոյրացած հարազատ զուակներ էին: Հանրային բարոյականի ըմբռնումը եւ զօրաւոր մարմիններու մէջ զօրաւոր բարոյական մը գտնելու գաղափարը այնքան յառաջացած էր որ մասնաւոր մարզիկ որոշուած էին մասնակցողներուն անցեալը քննելու համար: Մրցումներու ատեն ունէ անկարողութիւն վրամ ծրագրուած ունէ կողմնակցութիւն անմիջապէս կը զուարէր մասնաւոր պաշտօններու միջոցաւ, որոնց ձեռքի խարազանը անխտիր թէ հարուստին եւ թէ աղքատին ուսերուն կ'իջնէր: Այսպէս, Շիքաս, որ Սպարտայի ամենաազդեցիկ անձերէն մէկն էր, հրապարակով զանակոծման ենթարկուեցաւ:

Մարզանքներէն անմիջապէս ետք տաք ջուրի օժանդակութեան դիմում կ'ըլար, մարմինը փոշիներէ եւ քուտած իւղերէն մաքրելու, ինչպէս նաեւ հանգստացնելու համար, ու այս ալ կ'ապացուցանէ թէ ջուրին մարմինին վրայ ունեցած բարեբար ազդեցութիւնը շատ հին ժամանակներէ ի վեր ծառայած էր:

Առաջին անգամ դուստրուած Ոլիմպիական խաղերուն ծրագիրը շատ պարզ էր, ու կը բաղկանար միայն վազելու մրցումները, բայց հետզհետէ ծրագիրները աւելի ընդարձակուեցան, այնպէս որ քսաներորդ Ոլիմպիականին արդէն շատ մը ուրիշ ճիւղերու հետ, ըմբշամարտութիւնը, կոփամարտը եւ կռոյք քեղը ընդունուած էին: Առաջին օրը միշտ կրօնական եւ պաշտպան աստուածներու նուիրուած էր, երկրոր օրը փոքր տղայոց մրցումներուն յաւկայուած էր, երրորդ եւ չորրորդ օրերը ամենաըլխաւոր մրցումներուն. իսկ հինգերորդ օրը մնացեալ մասերուն լրանալէն ետքը՝ դարձեալ կրօնական պաշտամունքներու եւ շահող մարզիկներուն յարթական տողանցքին:

Առաջին ելլողները մեծ հանդիսաւորութեամբ կ'առաջնորդէին դէպի Արամազդի տաճարը, ուր կը ստանային իրենց ձիթնիկ ճիւղէ մրցանակները: Այդ տաճարը կառուցուած էր Քրիստոսէ առաջ 572 թուականին. տաճարի կառուցման մասնակցած էին այն ատենուան ամենանշանաւոր արձանագործները, նկարիչները, ճարտարապետները: Այդ տաճարին մէջն էր աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը կազմող Արամազդի արձանը, որ տասնութը մեղր բարձրութիւն ունէր եւ շինուած էր սուկիէ, փղոսկրէ եւ թանկագին քարերէ, եւ որոնք առջեւ իւրագանչիւր յարճական մարզիկ պարտաւոր էր ծնրադրել:

Ս Կ Ա Ո Ւ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԱՐՄԱՆԻ ՎՐԱՅ

(Քաղուած՝ Բ. Ֆ. Ու. ի մասնագիտական գրքոյկէն)

ՀԱՐՑՈՒՄ — Ի՞նչ պէտք է ընել տղեկի մը՝ որ եռացեալ ջուր խմած է:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Քիչ մը ձէթ խմցուր եւ սառի կտոր մը կլլեցնել տուր. նոյն ատեն տաք ջուրի մէջ թաթխուած սպունգ մը կոկորդին վրայ դիր: Սպունգը պէտք է խաշէ տղեկին մոտքը:

ՀԱՐՑ.— Պէ՞տք է զրդուողեղ տրուի աղջկան մը՝ որ բուժքը դաւարելով նուազած է:

ՊԱՏ.— Նուազումը ցաւի պատճառու յառաջ եկած ըլլալուն՝ կարելի է ապահով կերպով զրգոտաղեղ առլ:

ՀԱՐՑ.— Ի՞նչ պէտք է ընել մէկու մը, որ մնդունեցու երտմէ մը քայթթուած է:

ՊԱՏ.— Խայթուած մասին վրայ դի՛ր պիտարպոնաք տէ ատտէի ջուր, Թեկար ամոնիաք հեղուկ կամ ալքոլ, եւ կամ թէ թարմ սոխի շերտով մը նոյն մասին վրայ չիֆէ: Յտացած հարուածին համար կարելի է զրդուողեղ առլ:

ՀԱՐՑ.— Վարտա՞! ոչ թէ կատուած) շուն մը տղու մը ոտքը կը խածնէ եւ դիտմէ մաս մը միտ կը պատռէ, արիւնը կը հոսի դրայցած վէրքէն: Ի՞նչ նարինական դարման պէտք է տրուի:

ՊԱՏ.— Տղան պտակեցուր. վէրքը լաւ մը լուայ հականնիխչ ջուրով, քսիկա կը մաքրէ վէրքը եւ արիւնահոսութիւնը կը քաջալերէ: Երբ որ վէրքը բուսական մը մաքրուած է, փաթթէ զայն մաքուր չոր կտաւով մը եւ անոք վրայէն դիր կտաւէ բարձիկ մը ու ամբացուր զայն ծալուած թաշկինակով մը: Իժիշկին իմաց տուր:

ՀԱՐՑ.— Ի՞նչ պէտք է ընել օձի խայթուածքի դէմ:

ՊԱՏ.— Եթէ խայթուածքը անդամի մը վրայ է, թաշկինակով ամուր մը կապէ վէրքէն վեր, յետոյ սկսէ ծծել խայթուած կէտը, վերջը զօրաւոր գանտի հեղուկ դիր եւ կամ բիրեղուած փերմանկանաքա տէ փոքասով չիֆէ: Ապատօրէն զրդուողեղ տուր. բժիշկ կանչէ: Վէրքը ձծկլէ յետոյ բերանը օդիով կամ ալքոլով բու մը լուայ:

ՀԱՐՑ.— Ի՞նչ է փսխեցուցիչը. երեք փսխեցուցիչի անոն տալը եւ բնէ թէ ի՞նչ քանակով կրնայ տրուի:

ՊԱՏ.— Փսխեցուցիչը դեպ մըն է, որ եթէ բուսականապի քանակով մը տրուի, սիրտի խառնուրդ կը պատճառէ, զորօրինակ թէյի գաւաթով լեցուն պաղ ջուրի մէջ՝ ապուրի դգալ մը մանանեխ (մուսթարտա) կլլալեցուկ թէյի քաւաթ տաք ջուրի մէջ՝ երկու ապուրի դգալ ալ. ապուրի դգալ վը պէնի:

ՀԱՐՑ.— Որո՞նք են հիւանդ մը պատգարակով փոխադրելու կանոնները:

ՊԱՏ.— Պէտք է պլուխը ստեղծէն թիչ մը աւելի բարձր պահել. տափարակ գետնի վրայ եւ կամ զառիվայրէ իջեցուցած պարապային՝ ստեղծը առաջ, իսկ զառիվեր կլլելու պահուն պէտք է դուխը առաջ պահել: Վարի անգամներու ոսկրաբեկումի պարապային վերելքի ատեն ոտքերը առաջ, իսկ վայրէջքի պահուն զլուխը պէտք է առաջ պահել: Պատգարակիբնեք պէտք չէ համընթաց քայլ պահեն: Պատգարակը երբեք ուսի վրայ չի տարուիր:

ՀԱՐՑ.— Մարդ մը կերակուր կերած միջոցին կը խեղդուի, դէմքը կը սկսի սեւնալ: Ի՞նչ պէտք է ընել:

ՊԱՏ.— Անմիջապէս ջանալ դուրս հանելու կոկորդին մէջ թխմուած ուտելիքը, ազատօրէն մատդ կոկորդին մէջ խոթելով: Եթէ չյաջողիս այս փորձին մէջ, նրաթը շնչափողէն վար հրէ: Անմիջապէս որ շնչատական անցքը բացուի, արուեստական շնչառութիւն կատարէ, եթէ պէտք դրացուի: Բժիշկ կանչէ:

ՀԱՐՑ.— Մարդ մը կառքին տակ մնալով՝ անիւնները իր աջ ոտքին վրայէն անցած են: Ի՞նչ պէտք է ընել՝ որոշելու համար թէ ոտքը կոտորուած է թէ ոչ:

ՊԱՏ.— Հագուստները մի հաներ: Ձեռքդ զգուշութեամբ սրունքն ի վար տար եւ ուշադիր հետեւէ թէ միւս սրունքին հետ բաղդատմամբ սեւէ ձեւափոխութիւն ունի՞ր. յետոյ երկու ոտքերը չափէ եւ դիտէ թէ երկարութեան վրայ սեւէ փոփոխութիւն կ'այ: Եթէ վնասուած ոտքին վրայ ցաւով ձեւափոխութիւն մը կայ եւ վնասուած ոտքը աւելի կարճ է քան միւսը, կը նշանակէ թէ կոտորուած մը կայ:

ՀԱՐՑ.— Ի՞նչ պէտք է ընել քիթի սաստիկ արիւնահոսութեան դէմ:

ՊԱՏ.— Հիւանդը աթոռի մը վրայ նստեցուր, գլուխը ուղիղ, (արիւնոդ մասը վեր): Վիզին շուրջը գտնուող լաթերը թուլցուր. հիւանդին ձեռքերը դուրսէն վեր բռնած պահէ. սառ կամ պաղ ջուրի մէջ թաթխուած սպունգ մը զիր քիթին արմատը եւ վիզին ու ուսին մէջտեղը: Արիւնահոսութիւնը յաճախ քիթին յառաջակողմէն տեղի կ'ունենայ եւ կարելի է երբեմն հոսումը դադարեցնել քիթին վարի մասերը թեթեւօրէն սեղմելով. քացախ կամ լիմոնի ջուր քիթն ի վեր քաշելը յաճախ կը կեցնէ արիւնը, քիթը պէտք չէ փչել: Բժիշկ կանչէ:

ՀԱՐՑ.— Մէկուս աշին մէջ կիր կը ցատքէ, նախնական ի՞նչ դարձան պէտք է ընել:

ՊԱՏ.— Անմիջապէս բժիշկի մը դիմելու է, վասնզի ասիկա վտանգաւոր արկած մըն է: Նոյնամանակ կոպերը բաց եւ ջրախառն քացախով լուայ (ութը բաժին ջուր եւ մէկ բաժին քացախ): Մաքուր թաշկինակի մը ծայրով ջանայ կիրը հանել: Մէկ կամ երկու կաթիլ իւղ քարքօր օրլ, (հետեւեալին նախամեծար է) կաթեցուր աչքին մէջ:

ՀԱՐՑ.— Սենեակ մը ծուխով լեցուած է եւ ներսը, հեռուն, անկիւն մը, մէկը կայ գետինը փռուած, անդայ վիճակի մէջ: Որոշապէս բացատրէ թէ ի՞նչ պէտք է ընել:

ՊԱՏ.— Անհրաժեշտ է որ ուրիշը ազատելու ջանք թափելէ առաջ ծուխով լեցուն սենեակին մէջ մարդ իր անձին սպահովութեան համար կանխազգուշութիւններ ընէ: Քացախով եւ լուրով թրջուած թաշկինակ մը կապէ քիթիդ եւ բերնիդ վրայ, թոքերդ լեցուր մաքուր օդով սենեակ մտնելէ առաջ: Մուտը միշտ դէպի վեր կը բարձրանայ, այնպէս որ սենեակին յատակին վրայ աւելի քիչ մուխ կը գտնուի քան վերի մասերը: Տախտակամածին վրայէն սողոսկելով՝ ամենամօտ պատուհանին մօտեցիր, կոտրէ, կամ բաց պատուհանը, գլուխդ դուրս հանէ եւ կրկին լեցուր թոքերդ մաքուր օդով. յետոյ սողա զդաշագիրկ մարդուն մօտ եւ դինքը դուրս քաշէ անկէ: Վրայի սեղմուած հագուստները թուլցուր եւ արուեստական շնչառութիւն փորձէ, եթէ հիւանդին շնչառութիւնը դադրած է:

ՀԱՐՑ.— Անունները տուր այն նիւթերուն եւ առարկաներուն, որոնք անպայման ամէն տուն կը գտնուին եւ զոր կարելի է դործածել դարմանելու

ա— Աչքի մէջ կերբ, բ— Ափիոնէ թունաւորում, գ— Այրուածք, դ— Թունաւորում հոտած ձուկէ, ե— Ոտքի յօղաքալարում :

ՊԱՏ.— ա— Քացախ, լուր, իւղ, բ— Մանանխ, աղ, գոնտիի հեղուկ, սուրճ կամ թէյ, գ— Սուր սկրատ, իւղ, կտաւ, ասուեակ (Փլանէլ), բամպակ, Քաշկինակ (վիրակապի համար), ձեռքի դաւազան, հովանոց, փայտի կտորներ, ոստատրցակ (ոսկրակալի համար) :

ՀԱՐԹ.— Անձի մը հազուատները բոցեր պատած են, ի՞նչ պէտք է ընել :

ՊԱՏ.— Բոցը միշտ վեր կը բարձրանայ, այդ պատճառաւ արկածեալը պէտք է անմիջապէս գետին պռակեցնել. ապա թէ ոչ դէմքը կրնայ այրել : Երբ անձը պռակեցուցած էք բոցը միշտ վերը պէտք է մնայ. այսինքն երբ առջեւի կողմը բռնկած է պէտք է կռնակի վրայ պռակեցնել, իսկ եթէ կռնակի հազուատները կրակ առած են փորի վրայ դարձնելու է, եթէ ծոցերը ջուր կայ, անմիջապէս ջուր թափէ վրան, հակառակ պարագային՝ վերարկույով կամ գորգով մը ծածկէ վրան : Այսպէս ընելով ուր կ'արգիլուի եւ բոցերը կը մարին : Տաք եւ խանձած լաթերը յետոյ պէտք է լաւ մը թրջել :

ՀԱՐԹ.— Ի՞նչ պիտի ընէք մէկու մը՝ որ արիւն կը փութ :

ՊԱՏ.— Թուցնել վիզը եւ կուրծքը սեղմող հազուատները. պռակեցնել Քլանդը գլուխը եւ ուսերը բարձով մը վեր բռնուած : Սառ տալ Հիւանդին, որպէսքի ծծէ : Կատարելապէս հանդարտ պահել : Բժիշկ կանչել :

ՀԱՐԹ.— Ի՞նչ պէտք է ընել երբ օտար մարմին մը ականջ կը մտնէ :

ՊԱՏ.— Պարզապէս ոչինչ : Հիւանդը զբէրէ բժիշկին :

ՀԱՐԹ.— Պզտիկ տղայ մը լուցկիի գլուխ ծծած է ու յետոյ սարսափելի կերպով գունատած է եւ կը փութ : Ի՞նչ պէտք է ընել մինչեւ բժիշկին հասնելը :

ՊԱՏ.— Ատիկա փոսփորային թունաւորումի դէպք մըն է : Մանանխէ կամ ալ ջուրէ փսխեցուցիչ աուր ազուծ : Մեղմացուր թոյնը, կաթ եւ ջուր տալով կամ դարբի ջուր եւ կամ ալիւր ու ջուր խմեցնելով : Ընկճուճը դարձանէ զօրաւոր թէյով կամ սուրճով : Երբեք իւղ չտաս :

ՀԱՐԹ.— Ի՞նչ պիտի ընէ կնոջ մը որ արգանդախեղդի (հիսթերիա) վիճակ մը կը ներկայացնէ :

ՊԱՏ.— Հիւանդին ջով դանուոյնները բուրն ալ հեռացուր : Խիստ եղիւր Հիւանդին նկատմամբ, երբեք համակրանք ցոյց մի տար : Սպառնացիք պաղ ջուր թափել գլուխն ի վար՝ եթէ նոպան շարունակէ :

ՀԱՐԹ.— Ի՞նչ են արիւնին օզուանները :

ՊԱՏ.— Արիւնին պաշտօնն է՝ սնունդ փոխադրել մարմնոյն բոլոր կողմերը եւ աւելորդ նիւթերը մէկ գործարանէն անտիլ դէպի այն գործարանները՝ որոնք կրնան օգտուիլ անոնցմէ : Արիւնը կը ծառայէ նաեւ մարմնոյն դանազան մասերուն ջերմութիւն բաժնելու :

ՀԱՐԹ.— Ի՞նչ են այրուածքի մը զանազան աստիճանները :

ՊԱՏ.— Առաջին աստիճան՝ պարզ ցաւ եւ կարմրութիւն, երկրորդ աստիճան՝ պալարներ, երրորդ աստիճան՝ մորթի եւ Հիւսուածքներու պրկում :

ՀԱՐԹ.— Մարդ մը բարձր սանդուխի մը գլուխէն վար կ'իջնայ, զգոյսգիրկ եւ միեւնոյն ատեն ահանջէն ալ արիւն կը հոսի : Ի՞նչ ունի մարդը եւ ո՞րպիսի դարձան պէտք է տանիլ :

ՊԱՏ.— Երբ մէկը զգոյսգիրկ եղած է եւ ահանջէն ալ արիւնահոսութիւն ունի, դէպքը պէտք է նկատել իբր ոսկրաբեկում զանկի յատակի : Ասոր դարձանը պիտի ըլլայ՝ Հիւանդը հանդարտ պահել կռնակի վրայ, գլուխը եւ

ուսերը բարձրացած՝ ծալուած բաճկոնի մը վրայ (հետեւելով այն ընդհանուր օրէնքին, որով արեւնահասութիւն ունեցող բոլոր անդամները պէտք է վեր պահել), գլուխը գով եւ մարմինը տաք պէտք է պահել եւ իմաց տալ բժիշկին:

ՀԱՐՑ.— Կողոսկրի մը կոտրած ըլլալուն նշանները որո՞նք են:

ՊԱՏ.— Ենչատուփեան կամ հաղի ժամանակ ցաւ: Կոտրած ոսկորի ձայն՝ դորաւոր շնչատուփեան պահուն: Կակղուփիւն կոտրած ոսկորին տեղը: Եթէ Թոքը վնասուած ըլլայ, ենթական արիւն կը փսխէ:

ՀԱՐՑ.— Որո՞նք են լուսնոտութեան ախտանիշերը:

ՊԱՏ.— Ենթական յանկարծ, ընդհանրապէս ստանց ազդարարութեան, անզգայ գետին կ'իշխայ, երբեմն ճիշ մը արձակելով ինկած միջոցին: Ոտքերը եւ ձեռքերը, երբեմն ալ գլուխը կը պրկուին ու կը ցնցուին սարսափելի շլամ-ձուլութեամբ: Անքերը ամուր մը սեղմուած են: Ենթական ակուանները կը կըճտէ: Փրփուր (երբեմն արիւնաներկ) դուրս կուգայ բերնէն: Գլուխը սովորաբար մէկ կողմ հակած է: Երևը կապտազոյն է: Աչքերը անզգայ են ու բիբերը պղտիկցած ու սեւեռուն: Նոպան երկու վայրկեան կը տեւէ: Ենթական սովորաբար քնոտ է նոպայէն վերջը:

ՀԱՐՑ.— Ի՞նչպէս պէտք է խնամել լուսնոտութեան ենթական:

ՊԱՏ.— Բոլոր սեղմուած հագուստեղէնները թուլցուր: Ակուաներուն մէջ-տեղ բան մը դիր, լեզուն շխածնելու համար: Ծրարուած բաճկոն մը կամ բարձ մը դիր գլխուն եւ ուսերուն ներքին: Ենթակային շարժումները մի՛ արգիւր, բայց նայէ որ զլածգութեան միջոցին իր ձեռքերը կամ ոտքերը կրակին մէջ չձգէ եւ կամ պատին չզարնէ: Թող որ հիւանդը քնանայ, երբ նոպան անցած է: Գրգռազեղ մի տար: Երբ ենթական ինքզինք կը դտնէ, խնամէ տեւ վէրք՝ գոր կընայ ստացած ըլլալ հիւանդութիւնը եկած միջոցին գետին իջնալով:

ՀԱՐՑ.— Նշանները եւ դարմանումը ըսէ դալարուած բումբի մը:

ՊԱՏ.— Ցաւ եւ ուռեցք բումբին վրայ, եւ օտելի վերջը դուստաութիւն: Ուժի կորուստ: Դարմամբ.— Բացարձակ հանգստութիւն յօդի: Պաղ ջուրով թրջուած լաթ մը յօդին վրայ դնել եւ շարունակ թաց պահել լաթը: Ոտքը գետնէն բարձր պահել:

ՀԱՐՑ.— Արեւհարութեան մը միջոցին ի՞նչ պէտք է ընել:

ՊԱՏ.— Բժիշկ մը կանչել: Ենթական փոխադրելով գով տեղ մը եւ բոլոր սեղմուած լաթերը քակելէն յետոյ, պաղ ջուր թափել գլխուն վրայ, վզին ետեւը եւ կուրծքին վրայ՝ ենթակային երկու ոտք բարձր բռնուած ջրամանէ մը: Երբ հիւանդը ինքզինքին եկած է, պաղ ջուր տուր որ խմէ: Ազատ թող ենթական որ աւատ եւ թարմ օդ շնչէ: Գրգռել մի տար:

ՀԱՐՑ.— Ի՞նչ պէտք է ընես անձի մը՝ որ մարած է արեւնահասութեան հետեւանքով:

ՊԱՏ.— Եթէ արեւնահասութիւնը գեռ կը շարունակուի, անմիջապէս դադրեցուր՝ մատդ արիւն հոսող կէտին վրայ դնելով: Ատկից վերջը բարձիկ մը դիր մատիդ կոխած վէրքին մէջ եւ ուրիշ բարձիկ մըն ալ վէրքին վրայ գնելով, ամուր մը կապէ ծալուած թաշկիւնակով մը: Ենթական գետինը պառկեցուր, ուսը եւ գլուխը մարմնոյն հետ մէկ գծի վրայ բերելով: Ոտքերը վեր վերցուր երեսուն սանթիմետրի չափ եւ բոլոր ամուր հագուստները թուլցուր: Գրգռազեղ պէտք չէ տալ:

ՀԱՐՑ.— Բոպիկ տղեկ մը վազելու միջոցին ոտքը կը կտրէ ապակիի կտո-

րով մը. պայմաւ կարմիր արիւն կը ցայտէ վէրքէն: Ի՞նչ նախնական դարձան պէտք է տա՛

ա) Եթէ վէրքին մէջ ապուի մնացած չէ.

բ) Եթէ ապուիի կտորներ վէրքին մէջ խրուած ըլլան:

ՊԱՏ.— ա) Արիւնահոսութիւնը դադրեցուր մատը վէրքին վրայ դնելով, նոյն ատեն պատրաստել զթանէ բարձիկներ, որոնք երբ պատրաստուին փոքրիկ բարձիկ մը դնել վէրքին մէջ եւ անոր վրայ դնել աւելի մեծ բարձիկ մը եւ ամուր մը կապել զանոնց ծալուած թաշօինակով մը: Ոտքը վեր վերցուր, քահի որ տղեկը բուսիկ էր եւ ծնկակապ չունէր թուլցնելու եւ հանելու համար:

բ) Այս պարագային, կարելի չէ բարձիկներ տեղաւորել եւ կոխել վէրքին վրայ, քանզի այդ կերպով ապուիի կտորները, աւելի խորը պիտի մտնեն: Հետեւաբար արիւնահոսութիւնը պէտք է դադրեցնել ծունկին մէջտեղ գտնուող շնչերակը սեղմելով, նոյնպէս նաեւ բուժքրուն ներքի եւ դուրս շնչերակները, նախ մատերով յետոյ բարձիկներով, որոնք պէտք է ամբացուին ծալուած թաշկինակով մը: Ոտքը վեր բռնած պահէ եւ բժիշկին լուր տուր:

ՀԱՐՑ.— Թունաւորումներու սովորական դարմանները թուէ:

